

«ՄԵԼՈՒ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱԳՐԻ 25 ԱՄԵՆՑ ՅՈՒՐԵԼԵՆԸ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Յիշողութիւն

Յուէր Պետրոս Սիմոնեանցի յիշատակին

1882 թուականն էր: Ալէքսանդրապօլի թատերասիրաց խումբը մի ամբողջ տարու շրջանում, պեսակ տեսակ խոչնդոտների և արգելքների հանդիպելով, հազիւ կարողացաւ ներկայացնել երկու պիես, մինը 1882 թուի յունուարի 31 «Զոհի փոխարէն զոհը», միւսը՝ նոյն թուականի հոկտեմբերի 25 ին «Քանդած օջախ»: Այդ միջոցին վրայ հասաւ Մեղուի յորելէնը, որ չէր կարող աննկատ անցնել Ալէքսանդրապօլի պէս քաղաքում, ուր մեծ յարգանք էր վայելում այդ լրագիրը: Ուստի իւր ժամանակին հարց բարձրացաւ տօնը կատարելու:

1882 թուականի նոյեմբերի 20 ին, շաբաթ, կէս օրից յետոյ, ըժ. Յոհաննիսեանցի հրաւերով մի փոքրաթիւ ժողով կայացաւ վիճակային տղայոց դպրոցի դահլիճում, ուր ներկայ էին ժամանակի յաջորդ Յուսիկ վարդապետը (այժմ արքեպիսկոպոս, Սինօդի անդամ եւ Արարատ ամսագրի խմբագիր), Մինաս քահանայ Տէր Պետրոսեանց (այժմ աւագ քահանայ, հոգևոր կառավարութեան անդամ Կարս քաղաքում), Հայրապետ Ղուկասեանց (ժամանակի ուսուցիչ, իսկ այժմ Գարեգին քահանայ Բագում) բժիշկ Յոհաննիսեանց, Պետրոս Հայկազունի, և ժամանակի ուսուցիչներ Աղաբէզ Ամիրեանց, Աղէքսանդր Մխիթարեանց եւ Աղաբէզ Արշակունի: Խորհրդակցութեան նպատակն էր խորհել թէ ինչպէս և ի՞նչ ձևով կատարել յորելէնը:

Նդան զանազան կարծիքներ և առաջարկութիւններ, սակայն ժողովը կանգ առաւ մի առաջարկութեան վերայ, (Աղաբէզ Ամիրեանց) այն է՝ տալ մի շքեղ ներկայացում ի պատիւ 25 ամեայ յորելէնի, որից ստացած զուտ արդիւնքը ներկայացնել խմբագիր Պետրոս Սիմոնեանցի տնօրէնութեան: Յանկութիւն յայտնուեց,



† Պետրոս Սիմոնյան

որ ներկայացումը կայանայ դեկտեմբեր 12 ին, որ՝ օրը պէտքէ կատարուէր Թիֆլիզում նոյն յօրեկէնը:

Այս որոշումը նախապէս հարկաւոր ճանաչուեց ներկայացնել Թատերասիրաց ամբողջ խմբին, որի անդամներն էին ոմանք այս մասնակի ժողով կազմողներէց:

Նոյեմբերի 23 ին, երեքշաբթի օր, քաղաքային կլուբի դահլիճում, Թատերական բեմի վերայ կայացաւ երկրորդ խորհրդակցութիւն: Ներկայ էին Յակոբ Տիգրանեանց (այժմ հանգուցեալ), Աղաբէգ Ամիրեանց, երկրաչափ Կարապետ Ջալալեանց, բժ. Յոհաննիսեանց, բժիշկ Մնացական Յարութիւնեանց (այժմ Սիմֆէրոպօլ կարանտինի դիւրեկտոր), Մակար Տէր Սարգսեանց, սպայ արտիլլերիստ Դաւիթ Աշխարումեանց (այժմ գնդապետ Կարսում) եւ սպայ Իսահակ Թոխաթեւեանց (սպա մասնակից ՊորտԱրտուրի պաշտպանութեան, այժմ գեներալ):

Երկրորդ խորհրդակցութիւնը հաւան հանդիսացաւ առաջին ժողովի որոշման և վճռուեց ներկայացնել առաջին անգամ Մուրացանի «Ռուզանը», որի դերերը երկու օրից յետոյ սկսեցին բաժանել:

Ներկայացման գործը քանի որ ճառախօսութիւնների սահմանումն էր, շատ կանոնաւոր ու արագ էր ընթանում, բայց որ անցաւ ու հասաւ իրագործելու սահմանին՝ սկսեց դանդաղանալ: Առաջին արգելառիթ քարը գլորեց շնորհալի դերասանուհի օր. Կատարինէ Քեանդարեանը, մերժելով վերցնել Ռուզանի դերը, որովհետեւ օրիորդը ուսուցչական խմբից հեռացել էր և մտել էր մի այլ, անկախ, Թատերասիրաց խմբի մէջ: Միւսներն էլ դանդաղաքայլ շարժումներով չէին յաճախում կրկնութիւններին զանազան պատճառաւորութիւններով: Աւելացրէք սրա վերայ և Գէորգ IV կաթողիկոսի մահը, որի հոգեհանգիստը դեկտեմբերի 7-ից մինչև 12, իւրաքանչիւր երեկոյ գրաւում էր ուսուցիչներին դպրոցի աշակերտներով:

Իսահակ Թոխաթեւեանցը, որ տարուկիսում ընտրուած էր Թատերական ներկայացումների կառավարիչ, երկու անգամ հրաւէր կարգաց դերակատարներին, նաեւայն ապարդիւն: Ուստի նա, կառավարիչը, դեկտեմբերի 22 ին մի կտրուկ հրաւէր ուղարկեց դերակատարներին հեկտեալ բովանդակութեամբ. «Թատերասէրք. շատ ցաւում եմ որ մեր Թատրոնի գործն այսպէս թոյլ է ընթանում. սորա պատճառները տեսակ տեսակ են, բայց ամենագլխաւոր պատճառը մեր սառնութիւնն է և գործին եռանդով մօտենալու պակասութիւնը: Ընթէ գործն այսպէս դանդաղ ընթանայ, այն ժամանակ Ռուզանի» ներկայացումը դժուար թէ գլուխ բերենք

մինչև մեծ պատ: Ուստի կամ բոլորովին թողնենք այս գործը և խոստովանենք որ մենք խօսքով շատ բաներ կարող ենք անել, իսկ գործով՝ ոչինչ, կամ գործին կաշնենք եռանդով: Եթէ վերջինս ընդունելի է, խնդրում եմ, որ բոլոր դեր ունեցող թատերասերները անպատճառ ներկայ գտնուեն այսօր, ժամի 4ին վիճակային դպրոցի դահլիճում՝ Ռուզանի բուր հինգ գործողութիւնները կրկնելու և պիեսան անյապաղ ներկայացնելու»:

Այս խիստ հրաւերը, արդարեւ, ունեցաւ իւր ազդեցութիւնը, հաւաքուեցին ամէնքը, կրկնեցին պիեսան, պակասորդ դերակատարները լրացրին և վերջապէս որոշեցին, որ ներկայացումը կայանայ անպատճառ 1883 թուի յունուարի 12 ին, չորեքշաբթի օրը կլուրի դահլիճում:

Սակայն խումբը յորելէնի համար մի ներկայացումով չէր ուզում սահմանափակուել: Նա կամենում էր տօնել նաև ընկերական խնճոյքով, որի նախապատրաստութիւնն ընթանում էր ներկայացման հետ գողգոթաց: Որոշուած էր որ խնճոյքին մասնակցեն նաև թատերասիրաց խմբին չպատկանող անձինք, որոնք գործին համակրում են որ և է կողմից: Ուստի առանձնակի տոմսակներով հրաւիրւում էին այդպիսիները ապատօրէն, ով կցանկար: Այդպիսիների թիւը խմբի անդամների հետ հասաւ մինչև 50 երկսեռի հոգու:

Հետաքրքրական է այդ խնճոյքի նկարագրութիւնը, որ իւր ժամանակին տպուել է 1883 թուականի յունուարի 16, № 2 Մեղու Հայաստանի մէջ և պատկանում է տողերիս գրողին: Եւ որովհետև այն ժամանակից անցել է արդէն մօտ 30 տարի և հաւանական է որ ընթերցողների յիշողութիւնից վաղուց է անհետացել, բայց ներկայ յիշողութեանս հետ ունի անմիջական կապ, ուստի նոր նկարագրելուց խղճափելով, բերում եմ այստեղ նոյնութեամբ, ինչպէս նա նկարագրուած է յիշեալ լրագրի մէջ:

«Մեղու Հայաստանի» լրագրի 25 ամեայ յորելեանը Ալէքսանդրօպօլում տօնելը նշանակուած էր դեկտեմբերի 26-ին կիրակի օր: Դեռ ևս 15 օր առաջ երեք անձնից ընտրուած էր յանձնախումբ, մասնակցելցանկացողներին տոմսեր բաժանելու համար: Տոմսերի վերայ ոսկէ տառերով տպած էր «1858—1882 քսանհինգամեայ յորելեան «Մեղու Հայաստանի» լրագրի Ալէքսանդրօպօլում»:

Յիշեալ տոմսերից առել էին 10 տիկիներ և օրիորդներ և 40 տղամարդ:

Կիրակէ առաւօտեան, ամսի 26-ին, առանձին հրաւիրաթերթով կարգադրիչ յանձնախմբի կողմից՝ մասնակցողները ժո-

դովուեցան սուրբ Փրկչի եկեղեցին, ուր պատարագից յետոյ կատարուեցաւ հանդիսաւոր կերպով «Մեղուի» հիմնադիր և նախկին խմբագիր Ստեփաննոս քահանայ Մանդինեանի հոգեհանգիստը: Դիաքարձի շուրջը բոլորել էին մասնակցողները մի-մի մոմ ձեռներին:

Հոգեհանգստից առաջ յաջորդ Յուսիկ վարդապետը դառնալով ժողովրդականաց և մասնակցողներին ազդու յորդոր արտասանեց՝ կարճառօտ նկարագրելով հանգուցեալ Մանդինեան քահանայի խմբագրական գործունէութիւնը:

Նոյն օրը՝ երեկոյեան քաղաքային կլուբի դահլիճում նշանակուած էր յորհելեանի տօնախմբութիւնը: Եօթը ժամին դահլիճը շքեղ կերպով արդէն լուսաւորուած էր և հանդիսականները ժողովուում էին: Ժողովրդական երգիչ Զիւանին իւր ընկերակիցներով նուագում էին և երգում նոյն դահլիճի մէջ:

Դահլիճի հիւսիսային պատի վերայ գեղեցկանում էր վարդահիւս ոսկեզօծ շրջանակի մէջ շքեղ գեղարուեստով նկարած ճրատնէհինգամեայ յորհելեան «Մեղու Հայաստանի» լրագրի Աղէքսանդրօպօլում 1882: Շրջանակի վարի մասում նկարած էր եռօտանի գնդաձև թանաքաման, որից աջ և ձախ բարձրանում էին աղեղնաձև երկու մեծագիր գրչի փետուրները և ծայրերով մօտենում էին միմեանց վերի մասում: Այս նկարը շինած էր ընտիր ճաշակով:

Սրա դէմ, հարաւային պատի վերայ մեծ շրջանակի մէջ հազուցած էր նոյնանման պատկեր մեծադիր ձևով, թափանցիկ տառերով փորուած էր առաջին պատկերի պարբերութիւնը: Սրա տառերը գոյնզգոյն էին և լուսաւորում էին յետի կողմից: Այս շրջանակը վարագոյրով ծածկուած էր հանդիսականների աչքից:

Ժամի 8-ին հանդէսը պաշտօնապէս բացուեցաւ և դրա համար բարձրացաւ վերջին շրջանակը ծածկող վարագոյրը, նուագածու երգիչները սկսեցին գեղեցիկ եղանակով հանգուցեալ Շիրինի.

«Բացուիր, նազելի վարդ,

Ահա գարնան ժամանակ է,

Դո՛ւ բացուելուդ համար,

Բոլոր աշխարհս փափագ է».

Դահլիճը թնդաց բուռն ծափահարութեամբ և կեցցէներով, ապա հանդիսականներից շատ շատերը շնորհակալութիւն մատուցին Մակար Տէր Սարգսեանցին՝ իբրև այդ շքեղ պատկերները նկարողին:

Այդ միջոցին՝ հանդիսականների կողմից իսկոյն և եթ ու-

ղարկուեցաւ Թիֆլիս «Մեղուի» խմբագրութեանը հետեւեալ հեռագիրը Յիսուս հոգի կին և այլ մարդ կլուրի դահլիճում այժմ հանդիսով տօնում ենք «Մեղուի» քսան և հինգ ամեայ յորելեանը: Յանկանում ենք այդ լրագրին յարատեւութիւն, որպէս զի նա ունենայ ազագայում ևս առաւել արդիւնաւոր գործունէութիւն հայկական գրականութեան ասպարեզում:

Սրանից յետոյ մասնակցողները շղթայակապ տեղական պարէին բռնում, զուարճանում էին և ուրախանում: Պ. Շանլամեանը մերթ ընդ մերթ իւր յաջողակ ձայնով երգում էր ազգային երգեր: Պարերը շարունակուեցան մինչև ընթրիքը ժամը տասն և մէկը:

Դահլիճի երկարութեամբ ձիգ սեղանի շուրջը ընթրիքի նստեցան հանդիսականները՝ ընդհանուր կառավարիչ նշանակելով բժիշկ Յովհաննիսեանցին:

Առաջին բաժակը առաջարկուեցաւ Թաքաւոր Կայսեր կենաց, որի հովանաւորութեան ներքոյ գտնուում է մամուլը: Հանդիսականները ոտքի կանգնած միահամուռ կերպով Թնդացրին օդը եռակի ուժգին ուռայով: Ապա առաջարկուեցաւ իշխան Դոնդուկով-Կարսաւովի կենաց: Յետ սրա հայոց Հայրապետական գահը Թափուր Թողնող Հովուապետի յիշատակի՝ և նրա յաջորդին ընտիր արժանաւորութիւններ ցանկալուն բաժակը խմուեցաւ:

Հինգերորդ բաժակը առաջարկուեցաւ «Մեղու Հայաստանի» լրագրի յարատեւութեան կենացը, որի յորելեանը այժմ կատարւում էր: Միահամուռ կեցցէները Թան բերաներից: Այդ ըողէին ամբիոն բարձրացաւ պ. Ղուկասեանցը, որ յարգելով հանդիսականների յանձնարարութիւնը պատրաստել էր մի ճառ ցոյցտաւու յիշեալ թերթի 25 ամեայ գոյութեան գործունէութիւնը:

Դահլիճի մէջ տիրեց խորին լուսթիւն և բոլորի աչքերը բեկուռած էին ամբիոնի վերայ: Ճառախօսը գեղեցիկ կերպով նկարագրեց այն ժամանակի դրութիւնը, երբ ծնուեց «Մեղուն», ցոյց տուաւ այն դժուար հանգամանքները և փշոտ ճանապարհը, որոնց միջոցով յաջթանակ տարաւ լրագիրը: Յիշեց նրա գործունէութեան գլխաւոր կէտերը, խմբագրի ճիգը և այլն: Ազդեցութիւնը այնքան խիստ էր, որ վերջին խօսքից յետոյ անվերջ ծափահարութեամբ ծածկեցին ճառախօսին:

Ապա կեցցէներով խմուեցաւ լրագրի ներկայ խմբագիր բազմաշխատ Պետրոս Միմէօնեանցի կենաց բաժակը և սրանից յետոյ նրա արժանաւոր աշխատակից Սպանդարեանցի կենացը: Այդ միջոցին օր. Կատ Քեանդարեանը բերանացի արտասանեց մի քանի խօսք «Մեղուի» յարատեւութեան համար, որից յետոյ

ամբիոն բարձրացաւ տիկին Աշխէն Տէր-Սարգսեանց, իւր ճառի մէջ յարգոյ տիկինը նկարագրեց թէ ինչպէս հնուամբ նրանց քոյրերը թշնամուդէմ կուռում էին ցուրտ զէնքերով, իսկ այժմ նրանք կուռում են, ագիտութեան խաւարի դէմ թղթով ու գրչով, ուրեմն պէտք է սիրել այս վերջինները, պէտք է սիրել լրագրութիւնը ինչպէս մայրը իւր զաւակին և այլն: Ծափահարութիւնը պսակեց տիկնոջ:

Երբ սրանից յետոյ խմուեցաւ ընդհանրապէս հայ մամուլի յարատեւութեան և յաջողութեան կենացը, Ալէքս. Սանոյեանցը ամբիոն բարձրացաւ և արտասանեց մի ճառ, որի մէջ ընտիր կերպով ցոյց տուաւ «Մեղուի» արած ծառայութիւնը մի քանի կարևոր ազգային հարցերում:

Հայ հոգևորականները ինչ-ինչ պատճառով չէին կարող անձամբ մասնակցել այս առնախմբութեանը թէև շատերը ցանկանում էին: Երկսեռ դպրոցների կրօնուսույց Մինաս քահանայ Տէր-Պետրոսեանցը ուղարկել էր հանդիսին մի ուղերձ, որի մէջ կարճառօտ ցոյց տալով «Մեղուի» ազգօգուտ ուղղութիւնը՝ գովում էր հանդիսականներին, որ խմբուած մէկ տեղ՝ երախտագիտական օրինակելի զգացմամբ արժանի յարգանքն են տալիս ընդհանրութեան վերաբերեալ գործին և իբրև եկեղեցու մի պաշտօնեայ օրհնում էր նրանց: Վերը յիշել մոռացայ, որ լրագրի յարատեւութեան կենացի ժամանակ երգիչ Զիւանին ասաց մի նորաստեղծ իւր յօրինած ոտանաւոր «Մեղուի» մասին:

Ապա հանդիսականներից շատերը բերանացի յորդոր էին արտասանում, կենացներ էին առաջարկում Պոլսոյ պատրիարքի, լրագրի թղթակիցների, զանազան քաղաքներում այս յօրէլեանը կատարողների համար: Հանդէսը կատարւում էր կարգով, համեստ և լի ոգևորութեամբ: Ընթրիքից յետոյ մի քանի անգամ էլ պարեր բռնելով՝ ժամի երկուսին ուրախ սրտով և լաւ տպաւորութեամբ ամենեքեանք ցրուեցան:

Անցնենք նորից ներկայացման գործին: Յօրէլէնական խնձոքից յետոյ Թատերասէրները կրկնակի եռանդով շարունակեցին սկսած գործը: Մեծ արագութեամբ տարածուեց քաղաքում ներկայացման լուրը և հետաքրքրեց հասարակութեանը, որ օր առաջ աշխատում էր ձեռք բերել մուտքի տոմսեր: Դեռ աֆիշաները չտպուած, դեռ պատերին չկպած և ուրեմն դեռ չյայտարարուած, Ռուզանի տոմսերը 4 օր ներկայացումից առաջ արդէն սպառուած էին: Այս մի բացառիկ, չտեսնուած երևոյթ էր:

Վերջապէս երկուշաբթի օրը, 1883 թուի յունուարի 10 ին աֆիշ-շաները նարինջ թղթերի վերայ կպան փողոցների պատերին, և

յայտարարեցին հասարակութեանը, որ ներկայացուցած նշանակուած էր կլուբի դահլիճում, հորեքշաբթի երեկոյին յունուարի 12 ին: Աֆիշաների վերայ, սովորական ներածութիւնից յետոյ տպուած էր, որ անցքը պատահում է 1253 թուին թաթարաց արշաւանքի ժամանակ՝ Արցախու նահանգի խաչէն գաւառում:

Նոյն աֆիշաներից իմացուեց, որ դերակատարները հետեւալ անձինքներն են:

Հասան Զալալ Տօլա, իշխան խաչէնոյ	Հայրապ. Ղուկասեանց.
Մամբան, նոր կինը	օր. Վերօնիկա Բաղադեանց.
Ասպրամ, սորա նաժիշտը	օր. Էֆիմիա Սանոյեանց.
Ռուզան, Զալալի դուստրը	տիկ. Աշխ. Տէր Սարգսեանց.
Արշանոյշ, սորա նաժիշտը	օր. Գ. Թաղվերանեանց.
Զաքարէ, Զալալի եղբայրը	Կարապ. Զալալեանց.
Ատրնեբսէհ, Ռուզանի փեսացուն	Յոհան. Տէր Միրաքեանց.
Ումէկ	Արշ. Մխիթարեանց
Սմբատ	հայ իշխաններ
	Մ. Պօղոսեանց.
Սեադայ, Սիւնեաց իշխան	Աղ. Ամիրեանց.
Պապաք, սորա մտերիմ	Մ. Տէր Մարտիրոսեանց
Յուրիկ, դաւադիր զինուոր	Աղ. Արշակունի.
Զօլա, թաթարաց զօրավար	Ս. Վեհապետեանց
Բուզան, նորա եղբորորդին	Ն. Շահլամեանց.

Հասաւ ներկայացման ժամը, տոմսակաւոր բազմութիւնը կամաց կամաց ընկում էր իւր տեղերը, իսկ անտոմսակները աղերսում էին և չկար տոմսակ նորանց գոհացնելու: Երբ պահանջը շատացաւ և շատերին անկարելի էր լինում բացասել, թատերասէրները վճռեցին առաջին կարգի 20 հատ բազկաթոռները փոխարինել 26 հատ հասարակ աթոռներով և վերջապէս սովորական 142 տեղը հասցրին 149 ի, բայց պահանջը էլի չվերջացաւ: Անճաքացած 20—25 հոգի աւելորդ ներս առան լոկ կանգնելու, միջանիսին էլ բացասացին հարկադրուած:

Սուրբ բազմութիւնը դահլիճում տեսնում էր վարագոյրից վեր, առաստաղի տակ բազմեցրած մեծ վէնդէլ յետևից լուսաւորուած, որի վերայ գոյնզգոյն տառերով կարդացուած էր «քսան և հինգ ամեայ յորելեան Մեղու Հայաստանի լրագրի Ալէքսանդրապօլում 1859—1882»։ իսկ դահլիճի պատերից կախած վառ մոմերը զարդարուած էին թղթէ գօտիներով, վրան տպագրուած «Ռուզան»։ Հանդիսականները անհամբերութեամբ սպասում էին վարագոյրի բարձրանալուն:

Ուղիղ 7 1/2 ժամին կամաց կամաց բացուեց վարագոյրը: Հրաշալի տեսարան էր թատերական բեմի վերայ: Հանդիսականներ-

րի առաջ երևացին հին Ղարաբաղի հայ կտրիչները քուլաքէքը հագած, թրերն ու խանչալները կապած, սև մորթէ գլխարկները ծածկած. կանայք քաթիլաներով, շար ոսկիները ճակատին և այլն: Գործողութիւնն սկսուեց և կաշկանդեց բոլորին: Ամենքն էլ հաւասարաչափ վարում էին իւրեանց դերը և արժանի էին գովասանքի, մանաւանդ Կարապետ Զալալեանը: Հանդիսականներն այնքան յափշտակուած էին ներկայացումով, որ մինչև անգամ աննկատելի անցաւ Սևադայ Սիւնեաց իշխանի (Աղաբէգ Ամիրեանց) պատահական սխալ արտայայնութիւնը, թէ Վիմ բերանս բոլորի անուան մէջ կ'իջուր:

Միահամուռ բուռն ծափահարութիւնները կրկնուած էին իւրաքանչիւր գործողութեան վերջը բոլոր դերակատարների համար միասին: Միայն տիկին Աշխէն Տէր Սարգսեանցն էր որ երկու անգամ առանձին դուրս կանչուեց:

Հինգերորդ գործողութեան վերջում միահամուռ և թնդագին ծափահարութեամբ դուրս կանչուեց կառավարիչ Դաւիթ Թոխաթեկեանց, Ալէքսանդրապօլի հայկական բէմի այդ անխոնջ անցեալ աշխատանքը:

Այսպէս վերջացաւ Մուրացանի Ռուզանի յոբելենական ներկայացումը Ալէքսանդրապօլում, ուր հասարակութիւնը իւր խուռն րազմութեամբ պատուեց յոբելենը և միջոց տուեց թատերասիրաց խմբին ուղարկել Մեղուի խմբագրին, գաւառապետի ձեռքով, զուտ 174 ռուբլի գումար:

ԿԱԶՔԱՅԵՐՈՒՆԻ